

p

- | | | | | |
|---|--|-------------------------------------|----------------------------|-----|
| Էմբ. — Վ. Հ. Սրապիոն Վ. Ուլուհու- | էլեան ընդհ. Աբբահայր | 225 | | |
| Խմբ. — Գերապ. Փր. Աղամանեան՝ տիտ- | դոսաւոր եպս. Կոմանայ | 228 | | |
| Հայկական ճեմարան | | | | |
| Հացունի Հ. Վ. — «Ուղղագրութիւն և | | և առօգանութիւն հայերենի» վերջին աշ- | խատութեանս մասին | 229 |
| Գրական | | | | |
| Երեւեան Հ. Սիմոն. — Հրանտ Ասատոր. . | 234 | | | |
| Սօֆիան Վահրամ. — Մանածի թել | (քերթ.). | 251 | | |
| Յովիննենեսեան Հ. Վ. — Օտարութեան | մէջ մեռաւ (Ֆրանսացի զինուոր մը) (քերթ.). | 275 | | |
| Թերզեան ընտանիաց ալբոմը | 245 | | | |
| Գրախօսական | | | | |
| Հ. Վ. Յ. — Երգ երգոց (Ոստանիկի) . | 275 | | | |
| Գեղարվուեստական | | | | |
| Յովիննենեսեան Հ. Վ. — Յ. Աճմեանի | չորս նկարները (Սամ. Մուրատեան Վար- | ժարանին մէջ) | 252 | |
| Գիտական | | | | |
| Անդրեասեան Վազգեն ձարտ. — Օդային | պատերազմը | 240 | | |
| Թատրոն | | | | |
| Երեւեան Արամ. — Ոռոսահայ թատրո- | նի պատմութիւնը | 257 | | |
| Կենսագրական | | | | |
| Սմբատ Բիշրատ. — Լեռնականի մը յու- | շատերը (Ինքնակենսագրութիւն) . . | 246 | | |
| Ազգային քրոնիկ | | | | |
| Ամավերջի հանդէսներ Միսիթարեան Վար- | ժարաններուն մէջ. | | | |
| Խմբ. — Սամ. Մուրատեան (Սելր). . | . 276 | | | |
| Տ. Լ. — Միսիթարեան Վրժրն. (Երու- | սաղէմ). | 279 | | |
| Հովհաննես. — Խորհրդային Հայաստանի մշա- | | | | |
| կոյթը (լրաքաղ) | 284 | | | |
| Ռուղու Ա. — Ազգ մը որ կ'արշաւէ գեպ ի | | | | |
| արդիացում՝ Հայաստան. (թրգ. Խոալ.է). . | 288 | | | |
| Պահագրութիւն | | | | |
| Խմբ. — Դիկր. Պետրոս Լափոնթէն Պա- | | | | |
| տրիարք Վենետիկոյ. | 280 | | | |
| Խմբ. — Գերեկարապէտ Ծ. Վ. Պատուհա- | | | | |
| սեան մէծաւոր Զմիառեան միաբանութեան. . | 283 | | | |
| Réd. — Le Rév. P. Sérapion Dr. Ou- | | | | |
| louhodjian Abbé Général de la Congr. | | | | |
| Mékhithariste | 228 | | | |
| Réd. — Mgr. Fr. Agadjanian évêque . | 228 | | | |
| Académie Arménienne | | | | |
| Hatsouni P. V. — Les critiques sur | | | | |
| mon œuvre : «L'Orthographe et la pro- | | | | |
| sodie de la langue Arménienne» | 228 | | | |
| Littérature | | | | |
| Erémian P. S. — Hrand Assadour . | 234 | | | |
| Sofian V. — Fil de pelote (poésie). . | 251 | | | |
| Hovhannessian P. V. — A un soldat | | | | |
| français (mort dans le pays étranger) . | 275 | | | |
| L'album de la famille Terzian | 245 | | | |
| Recensions | | | | |
| P. V. H. — «Cantica Canticum» (par | | | | |
| Ostanigh). | 275 | | | |
| Beaux-Arts | | | | |
| Hovhannessian P. V. — Les tableaux | | | | |
| du peintre H. Adjémian (dans le collège | | | | |
| S. Moorat, à Sèvres) | 252 | | | |
| Science | | | | |
| Andréassian V. Ing. — La guerre | | | | |
| aérienne | 240 | | | |
| Théâtre | | | | |
| Erémian Aram. — Histoire du thé- | | | | |
| âtre des Arméniens en Russie | 257 | | | |
| Biographie | | | | |
| Sempat Burat. — Les mémoires d'un | | | | |
| montagnard (Autobiographie) | 246 | | | |
| Chronique | | | | |
| Fêtes de fin d'année dans les Collèges | | | | |
| Mékhitharistes. | | | | |
| Réd. — Collège S. Moorat (à Sèvres). . | 270 | | | |
| L. D. — Collège Mékhithariste (à | | | | |
| Jerusalem | 279 | | | |
| Hoghen. — La culture de l'Arménie | | | | |
| bolchévique | 284 | | | |
| Ugol A. — Una nazione in marcia | | | | |
| verso la modernità: l'Armenia | 288 | | | |
| Nécrologie | | | | |
| Réd. — † Le Cardinal Pierre La Fon- | | | | |
| taine Patriarche de Venise | 280 | | | |
| Réd. — † Le Rév. P. Garabed Badou- | | | | |
| hessian, Supérieur des Pères de la Congr. | | | | |
| de Bzommar | 283 | | | |

Բ Ա Զ Մ Ա Վ Ե Պ

ՀԱՆԴԻՍԱԲԱՆ

ԸԱՆԱՊԻՐԱԿԱՆ - ԳՐԱԿԱՆ - ԳԻՏԱԿԱՆ - ԲԱՐՈՑԱԿԱՆ

ՅՈՒԼԻՍ-ՕԳՈՍՏՈՍ - ԹԻՒ 7-8

ՎԵՆԵՏԻԿ Ա. Դ. Ա. Հ.

Վ. Հ. ՍՐԱԳԻՈՆ Վ. ՈՒԼՈՒՀՈՅԵԱՆ

ԸՆԹԱՆՐԱԿԱՆ ԱԲԲԱՆԱՅԻ

ԵՐԿՈՒՔՈՒԿԵՍ դար առաջ, մեր ցեղին
դարձաւոր պատմութեան ամէնէն թափածա-
զին և յուսակտուք շրջանին, Սեւանի սըլ-
բարանին խորհրդաւորութեան մէջ արար-
չագործ «Եղիցի» մը կը հնչէր:

Հայոց մենաւոր կղզին, այդ հինաւուրց
ճգնաբանը՝ Սիրնան կը դառնար Հայութեան,
ուր Միսիթար, ինչպէս Մովսէս, պատգամ
կը ստանար Կուսական բերնէն՝ գլուխ անց-
նելու մեջ վայրավատին ու կորսուած ժո-
ղովրդեան և իրազործելու իր հոգոյն մէջ
յզացած խորհուրդը՝ Հայ ազգին հոգեւոր
և մտաւոր վերածնունդը:

Երկար ու տառապալից ուղեւութենէ
մը վերջ՝ Մխիթար կտրելով ծով ու ա-
նապատ՝ դարձեալ մենաւոր կզզի մը կը
գտնէր իբր Հանգլուան իր ցեղին, տաճար
հայ ազգին բովանդակ նուիրական սրբու-
թիւններուն:

Հեռաւոր, մենաւոր ու փոքրիկ Ս. Կա-
բաց. ՅՈՒՆԻՍ-ՕԳՈՍՏՈՒ 1935

զարը ընդ փոյթ վերացած ու բարձրացած
Սողոմոնիան ոսկեզրուագ տաճարին նման՝
Հայ ազգին ոսկի զարերու փառքը կը վե-
րածնէր Մխիթարյայ լուսապայծառ հոգ-
ւոյն կենսատու շունչով. ու Երկինք իր
հովանին ու իր օրհնութիւնը իրրեւ կա-
մար, իրրեւ պարիսպ անոր համար կը
շռաւէր:

Ուստի, ի զուր շնչեցին մոլեգին հոգ-
մեր, ի զուր փրփրեալիս ալիքներ բախե-
ցին անոր որմերը՝ որ անյազթ վիմին
վրայ հաստատուած էին: կուսական պատ-
գամը միշտ ժպտեցաւ Ա. Ղազարի երկըն-
ուհաւաւ ու Միհեմանէան առնոն իս շա-

թիւ զլայ, ու Երևանա առաջ ու չ-
բունակէ խոր հաւատքով դիտել Երկինքը,
դիտել հեռաւոր Հայրենիքն ու անոր ցիր-
ուցան բեկորնեղը, կը շարունակէ կը կնել
յարատեւ ու անսասան Միսիթարայ ուխտը:

Ու արթուն պահակի պէս Նախագինաւ-
մութեան զրկած պահակներ իրաբու կը

յաջորդեն, իրալրու կ'աւանդեն երկնային
և ազգային սրբազան ժառանգութիւնը։
Հոն ուխտաւոր զինուոր մը կը փոխա-
նակէ զինուորը, Միսիթարի յաջորդ մը՝
անոր յաջորդին զահն և իշխանութիւնը
կը ստանայ. և այդ հոգեկան յաջորդու-
թեան մէջ կ'անմահանայ Լուսանորոգն
Միսիթար և իր մեծ զործը՝ Հայ ազգին
լուսաւորութիւնը։

Այդպէս էր որ տարւոյս Օգոստոսի 12-ին,
Ա. Ղազարու մէջ գումարուած Միաբա-
նական ընդհանուր ժողովին մէջ Միթթա-
րեան Միաբանութեանս հասարակաց հա-
ճութեան և հրճուանքին մէջ ընտրուեցաւ
Միթթարայ արժանաւոր յաշջորդը՝ յանձին
Վ. Հ. ՍՐԱԳԻՈՆ Վ. ՈՒԼՈՒՅՈՒՆՑԵԱՆ:

Նորընտիր Գերպ. Աբբահայրը ծնած
է Խարբերդի Ղատեմ զիւղը՝ 1890 փետր.
14-ին, և 15 տարեկանին՝ հետեւելով
աստուածային կոչման՝ ինքզինքը նուի-
րած է Մխիթար Աբբահօր տան մշտնջե-
նաւոր որդիութեան:

Ուշիմ և բարեպաշտ պատանին մենաստանի լրութեան մէջ սրբութեան օծումով հասակ կ'առնէ. գեղեցիկ բնութիւնն և կրօնքը իր մէջ կը զրոշմեն հեղահամբոյր սիրա մը, խոնարհ հոգի մը՝ միանգամայն գուարթամիտ ու ժրագան:

1915ի Մայիսի 23-ին քահանայ կը
ձեռնադրուի Ալբենսու. Կիւրեղեան Որբա-
հօրէն: Տարի մը վերջ կը մեկնի Հոռմ
յաճախելու Աստուածաբանական համա-
լսարան: Հակառակ իր հիւանդագին վիճա-
կին՝ փայլուն յաջողութեամբ կ'աւաստէ

տութեան ուղղափառութիւնն և նոյնութիւնը նոյն Ս. Փողովի դաւանական բուլոր վճիռներուն հետ: Ուսումնակիրութիւնը ամենամեծ զնահատանքի արժանացած էր համալսարանին բոլոր ուսուցիչներէն: Եւ մինչ գեղեցիկ յոյսեր կը մշակէր նույիրուելու ազգային եկեղեցական-մատենազբական ուսումնական աշխատութեանց Ա. Ղազարու մէջ, Ուստիս վարիչներն ընդհակառակն երկայն տարիներ զինքն Հռոմի Միսիթարեան Ուսանողարանին վրայ կը թողուն: Նկատելով ժամանակի փափուկ դիրքը՝ Գերպ, Ուլուհօնեան շատ լուսամիտ եղաւ իր փոխ-տեսչի և երբեմն տեսչի պաշտօնին մէջ: Աշակերտներէն ու օտարներէն միայն զովեստ և բարեկամութիւն վաստկեցաւ շարունակի:

1926-ին էր որ կանչուեցաւ ի Ա. Ղազար և կարճ ժամանակէ մը վերջ անցաւ Մուռատ-Ռափայէլեան վարժաբան իրքեւ ուսումնապետ :

Հոս ալ նոյն նուիրումն ու խոհեմու-
թիւնն ունեցաւ հոգիներ կրթելու և ազգին
ազնիւ սերունդներ հասցնելու:

1928ին վերջերը զինքը կը գտնենք
Սեւը (Բարիգ), ուր կը ստանձնէ Մուրա-
տեան վերաբաց վարժարանի ուսումնա-
պիտութիւնը, որ փորձ և հմտութիւն կը
պահանջէր իր այդ նախկին քայլերուն
մէջ: Եւ Գերպ. Արագիոն եօթը տարի
շարունակ լոին աշխատանքով շինեց, կազ-
մակերպեց և օրէ օր վարժարանին թէ
կըթական և թէ ուսումնական մակարդակը
տարձրացուց, և չնորհիւ այդ աշխատու-
թեան է որ հաստատութիւնը կը վայելէ
իտոք՝ պետական յաջող քննութիւն-
ներով:

Նա անշուշտ չէր սպասել թէ իրեն
պիտի վիճակուէր Մխիթարի յաջորդու-
թեան պատիւը և խաչը։ Շատեր ձգեց
փարիզի մէջ՝ վերադառնալու և ողջունե-
ու յուսով։ սակայն Նախախնամութիւնը
իր մէջ կը տեսնէր զոհաբերուող հոգի մը,
և ատոր համար իսկ իրեն կը վստահէր
Մխիթարեան Ուխտիս ժառանգութեան
իառքն ու գործը միանգամայն։



ԳԼՐՎՊ. ՄԵՍԱՓԻՌՆ Վ. ՈՒՆՉՈՒՀՈՅՑԵԱՆ

ԸՆ ԳՀ. ԱԲԲ ԱՅ ՄԽԵԹ. ԱՐԵԱՆ ՄԻԱՅ ԱՆ ՈՒԹ Ե ԱՆ

Ընտրութեան լուրին վրայ իրարու յա-
ջորդեցին շնորհաւորական հեռագիրներ ու
նամակներ՝ սկսեալ Ա. Քահանայապետէն,
Գերեզմանիկ Արքիարեան կաթողիկոսէն
մինչեւ իր ձեռքին մէջ մնած վերջին ա-
շակերտը:

Օգոստոս 17-ին սահմանուած էր «Հայր
օրինելու» տպաւորիչ արարողութիւնը ըստ
հայկական հնաւանդ սովորութեան. շատ
պարզ և համառու էր. շքեզօրէն զարդար-
ուած աւագ Ա. Սեղանին մօտ՝ Միսիթա-
րայ շիրմին վրայ կատարուեցաւ օրէնու-
թիւնը, ուսկից վերջ նորընտիր Գերպ. Ար-
քահայրը իր գահը բազմած՝ ընդունեցաւ
բոլոր միաբաններու հնազանդութեան և
յարգութեան հանդիսաւոր արտայայտու-
թիւնը՝ փոխադարձելով հայրական սրտա-
րուխ յորդորը՝ մեծին Միսիթարայ և անոր
յաջորդ անմահ դէմքերուն գծած լուսաւոր
և փառահեղ ճանապարհէն ընթանալու,
միջու դալար յոյսերով և նոր յաղթանակ-
ներու անիւախտ հաւատցով, վստահ Երկնքի
օրէնութեան և օժանդակութեան վրայ:

Յաջորդ օրը, Տիրամօր՝ Վերափոխման
տօնին, նորընտիրն իր Արքայական ան-
դրանիկ հանդիսաւոր պատարազը մատոյց.
Եկեղեցին խճողուած էր հայ և օտար բա-
րեկամներով, և քաղաքիս ժողովրդեան
խուռն բազմութեամբ:

Պատարազէն վերջ տեղւոյս հայ գա-
ղութն և Միաբանութեանս ծանօթներ ներ-
կայացան Գերպ. Արքահօր և ներկայա-
ցուցին իրենց յարգանցն և շնորհաւորու-
թիւնները:

Ուրախութեան և տօնի օր էր կրկնա-
պէս. չէ որ Միսիթար Արքահայր էր որ
կ'անմահանար իր յաջորդին մէջ:

Եղբայրական սեղանի մը շուրջ հրճուե-
ցան Միսիթարեան նորընտիր վեհն և իր
սրբազան գերդաստանը՝ մտերիմ բարե-

կամներու պսակով, որոնց մէջ բաց ի
Մուրատ-Ռիափայէլեան Վարժարաններու
նախկին և ներկայ սաներէն՝ կար Մու-
րատ-Ռիափայէլեան Նախկին Աշակերտաց
ներկայացուցիչը Փարիզի Միութեան կող-
մէն զրկուած:

Կարգացուեցան զրաբար և աշխարհա-
բար քերթուածներ, յետոյ հեռագիրներ,
յետոյ խանդակառ բաժականառեր:

Ատոնց հետ պէտք էինք յիշել երախ-
տագիտութեամբ բոլոր շնորհաւորական
նամակները պաշտօնական և անհատա-
կան՝ որոնցմով ազգային եկեղեցական ու
կրթական հաստատութիւններ և շատ ու
շատ ազնիւ սրտեր փութացին խնդակցիլ
Միաբանութեան և իր նորընտիր գլխուն,
ամէնքն ալ խորին գնահատանք և յարգանց
ունենալով աստուածապահ Ուխտիս հան-
գէպ, որուն կատարած գերն ու կատա-
րելիքը այնքան մեծ է եղած և պիտի
ըլլայ Ազգիս համար:

Մենք ալ երբ տողերս պիտի ամփո-
փենք, խորին շնորհակալութիւն կը յայտ-
նենք ամբողջ Միաբանութեանս կողմէն՝
ամէն անոնց որոնք նուիրուած են հոգւով,
սրտով Ուխտիս բարոյական ու նիւթական
բարօրութեան:

Անկեղծ և ջերմագին է մեր մաղթանըը
մանաւանդ Անոր համար՝ որուն ձեռքը
կը յանձնէ այժմ Նախախնամութիւնը
Միսիթարայ Նաւուն դեկը. Երկնքի առաս-
լոյսն և օժանդակութիւնը իրեն՝ որպէս
զի օր ըստ օրէ միշտ աւելի լայն չափով
իրագործուին Միսիթարայ և ամբողջ իր-
զաւակներուն լաւագոյն տենչերը ի նպաստ-
եկեղեցւոյ և Ազգիս՝ առացելական, կը բ-
թական և գրական բոլոր նուիրական աս-
պարէզներուն մէջ: